ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստան
Դրամաշնորհի Արտադրական մասշտաբի Արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման
Դրամաշնորհի: TF0A0418

Առաջադրանքի անվանումը: Նախառրակավորման փաստաթղթերի պատրաստում
Reference No. : SPP-CS-18/2016

Հայաստանի Հանրապետությունը ՎԷԸԾ Դրամաշնորհ է ստացել Կլիմայի Ներդրումների Հիմնադրամի **Վերականգնվող Էներգետիկայի Ընդլայնումը** ցածր եկամուտ ունեցող Երկրներում Ծրագրի շրջանակներում **(ՎԷԸԾ)**, որը կառավարվում է **Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ)** կողմից՝ **Արտադրական Մասշտաբի Արևային Էներգիայի Ծրագրի նախապատրաստման** ծախսերի համար, և նպատակ ունի միջոցների մի մասն ուղղել խորհրդատվական ծառայությունների մատուցմանը: Հայաստանի Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության Հիմնադրամը (Պատվիրատու) Դրամաշնորհի իրականացման գործակալությունն է:

Նպատակը

Առաջադրանքի նպատակն է աջակցել Հայաստանի Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության Հիմնադրամին (ՀՎԷԷՀ) նախառրակավորման (ՆՌ) փաստաթղթերի պատրաստման գործում՝ մոտ 50 ՄՎտ հզորությամբ Մասրիկ-1 առաջին արտադրական մասշտաբի արևային կայանի մրցույթի անցկացման համար: Նախառրակավորման գործընթացի նպատակն է՝ (i) ապահովել, որ Պատվիրատուի հետաքրքրությունը ճշգրիտ հաղորդվի շուկային, (ii) որոշել մասնավոր հատվածի հետաքրքրության չափը և բնույթը; և (iii) նախառրակավորել մրցունակ թվով որակյալ ընկերությունների/ կոնսորցիումների՝ արդար և թափանցիկ եղանակով:

Խորհրդատուի առաջադրանքները և պարտավորությունները

Խորհրդատուն պատասխանատու կլինի նախառրակավորման փաթեթի պատրաստման և ներկայացման համար՝ այդ թվում բոլոր անհրաժեշտ որակավորման պահանջի (ՈՊ) փաստաթղթերը, ներառյալ հրապարակման ենթակա նյութերը:

Ծրագիրը կառաջնորդվի ստանդարտ առևտրային գործընթացին համաձայն IPP-ի գնումների համար: Խորհրդատուն այսպիսով չպետք է օգտագործի Համաշխարհային բանկի ստանդարտ գնումների փաստաթղթերը՝ որպես հղում ՆՈ փաստաթղթերի պատրաստման նպատակով: Նա պետք է ապահովի, որպեսզի ՆՈ փաստաթղթերը համապատասխանեն գումարի արժեքի, տնտեսման, ճշտության հիմնարար սկզբունքներին, լինեն նպատակային, արդյունավետ, թափանցիկ և արդար:

Որակավորումը
Թեկնածուն պետք է ունենա հետևյալ որակավորումները՝

- Ճարտարագիտության, տնտեսագիտության, ֆինանսական կամ այլ համապատասխան ոլորտում նվազագույնը մագիստրոսի աստիճան;
- Նվազագույնը 3 տարվա փորձ մասնավոր էներգետիկ ծրագրերում գնումների իրականացման գործում;
- Առնվազն 5 տարվա փորձ մրցութային փաստաթղթերի, այդ թվում առաջարկների ներկայացման հրավերի և նախառրակավորման փաստաթղթերի պատրաստման (ՆՈ), էներգետիկ ծրագրերում մասնավոր ներդրողների/մշակողների միջազգային մրցակցային գնումների անցկացման համար, այդ թվում, արևային:

Առաջադրանքի տևողությունը – 20 օր

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամն այժմ հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական սեղմագրեր (CVs), որոնք ներառում են տեղեկատվություն Ծառայությունների իրականացման համար պահանջվող որակավորման և համապատասխան փորձի վերաբերյալ:

Ընտրության չափանիշները հետևյալն են.

- Ընդհանուր որակավորում -30 միավոր
- Հատուկ փորձառություն – 70 միավոր

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Բանկի կողմից 2011թ. հունվարին /վերանայված հուլիս 2014թ. /հրատարակված Համաշխարհային Բանկի Ուղեցույցի 1.9 կետին՝ “Խորհրդատուների ընտրությունը և աշխատանքի ընդունումը ՎԶՄԲ փոխառության, ՄԶԸ վարկերի և Համաշխարհային Բանկի վարկառուների դրամաշնորհների շրջանակում”

/Խորհրդատուի ուղեցույց/, որը սահմանում է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Լրացուցիչ տեղեկություն կարելի է ստանալ ստորև նշված հասցեով տեղական ժամանակով 9:00-18:00 (GMT+4:00):
Հետաքրքրությունների հայտը պետք է հանձնել ստորև նշված հասցեով մինչև **2017թ. հունվարի 9-ը, 17:00:**

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
Տնօրեն՝ Թամարա Բաբայան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն;
Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -11;
e-mail: g.zara@r2e2.am; zaruhigharagyozyan@yahoo.com
Վեբ կայք՝ www.r2e2.am